
ՄԽԻԹԱԼՅԱՆ Մ. Հ., 1848-1849 թթ. հունգարական հեղափոխության արձագանքները հայ իրականության մեջ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2003, 138 էջ:

Բազմավաստակ գիտնական Մարգո Մխիթարյանի այս աշխատության մեջ հանգամանորեն քննարկվում են հունգարական հեղափոխության արձագանքները հայ պարբերական մամուլի էջերում («Եվրոպա», «Արշալույս Արարատյան», «Հայաստան», «Ազգասեր Արարատյան», «Արարատ»): Հեղինակը նյութերը դասդասել և խմբավորել է ըստ պարբերական մամուլի հրատարակման ժամանակագրության:

«Եվրոպա» շաբաթաթերթում ներկայացվում են 1848-1849 թթ. հունգարական հեղափոխության իրադարձությունները: Հեղինակը ցույց է տալիս, որ «Եվրոպայի» խմբագրությունը այդ հիմնախնդրին մոտենում էր «քննախույզ» հայացքով: Եվ այդ իմաստով էլ Մխիթարյանների հրատարակած պարբերականում տպագրված նյութերը «պատմական սկզբնաղբյուրի արժեք» են ունեցել:

1848-1849թթ. ապստամբական գործողությունների ժամանակ Հունգարիան բարձրացրել էր ազատության դրոշը՝ ազատագրվելու ավստրիական բռնապետական կարգերից: Մ. Մխիթարյանը բացահայտել է «Եվրոպայի» քննադատական վերաբերմունքը ապստամբության ղեկավարների վերաբերյալ: «Եվրոպա» պարբերականը 1848-1849 թթ. հունգարական ազգային-ազատագրական շարժման ժամանակ իր լրատվությունը ստանում էր ոչ թե միջնորդավորված, այլ հունգարական աղբյուրներից: Դա նույնպես բարձրացնում է կատարված գործի արժեքը: Հատուկ ուշադրության է արժանի այն, որ աշխատության մեջ իմաստավորվում են պարբերականում տպագրված՝ Ֆրանսիայում, Ավստրիայում և Հունգարիայում ընդունված սահմանադրությունները, որոնք «Եվրոպայում» հայերենով առաջին անգամ էին ներկայացվում ընթերցողներին:

Մ. Մխիթարյանը անդրադարձել է այն իրողությանը, որ «Եվրոպան» դեմ է Ֆրանսիայում կոմունիզմի հաստատման գաղափարին՝ կարծելով, որ այն կարող էր կործանարար լինել ժողովրդական զանգվածների համար: Այս իմաստով հետաքրքրական է «Եվրոպայում» 1848 թ. (N 48-52) տպագրված «Հայրենասիրություն» հոդվածը, որտեղ շեշտված է այն միտքը, որ ժամանակի «պատերազմական և հեղափոխական թոհուրոհում» հայերը, ապրելով այդ երկրներում, պետք է հավատարիմ լինեն տիրող կարգերին: Դրանով իսկ Մ. Մխիթարյանը նոր կողմերով է բացահայտում Մխիթարյանների բացասական վերաբերմունքը այդ հեղափոխությունների նկատմամբ: Հեղինակը ցույց է տալիս, որ պարբերականը, հրատարակվելով 1847-1863 թթ., գնահատում և լուսաբանում էր եվրոպական՝ 1848-1849 թթ. հեղափոխական շարժումները, նախ՝ չափավոր դիրքերից, իսկ գրաքննության վերացումից հետո՝ անկաշկանդ կերպով

ներկայացնում Եվրոպայում տիրող իրադրությունը: Մխիթարյանների նույն վերաբերմունքի արդյունքն էր այն, որ բացասական գծերով են ներկայացնում Ջուզեպպե Մաձձինիի «Երիտասարդ Իտալիա» կազմակերպության գործունեությունը, որի նպատակն էր «օրինավոր իշխանությանը տակնուվրա ընել» և Իտալիայում հաստատել հասարակապետություն: Լրագիրը քննարկում է Լոմբարդիայում, Սարդինիայում և Տոսկանայում տեղի ունեցող իրադարձությունները:

Մ. Մխիթարյանը նկատում է, որ 1848թ. Ֆրանսիայում սկսված հեղափոխությունն իր բարերար ազդեցությունն ունեցավ եվրոպական հեղափոխական դեպքերի և մասնավորապես Հունգարիայի ու Իտալիայի վրա: Մխիթարյաններն այս առիթով վկայակոչում են Պեշտում սկսված հուզումները՝ մամուլի ազատության համար:

Մ. Մխիթարյանը հունգարական և ավստրիական հեղափոխական շարժման իրադարձությունների վերլուծությամբ ու նուրբ եզրահանգումներով ամբողջացնում է «Եվրոպայի» բովանդակությունը և դիրքորոշումը այդ հեղափոխությունների նկատմամբ: Ի վերջո, հունգարական XIX դ. 40-ական թթ. երկրորդ կեսի հեղափոխությունը պարտվում է: Ավելի ուշ (հոկտեմբերի 16-ին) թերթը ցավով է ներկայացնում Արադում մահապատժի ենթարկվածների անունները, որոնց մեջ էին հայազգիներ Լազարը և Գիշը: Սրանք նույնպես արժեքավոր փաստեր են հունգարական հեղափոխության վերաբերյալ:

«Եվրոպան» առանձնահատուկ ջերմությամբ է գրում հայազգի զորավար Էռնեստո Գիշի գործունեության և նրա անձի հետ կապվող մանրամասների մասին: Ջորավարը ազատագրական կռիվ ժամանակ 49 տարեկան էր, ստացել էր գնդապետի աստիճան, նրա կալվածքը գնահատվում էր 200000 ֆիորինով: Եվ անկախ այն բանից, թե ում կողմն է «Եվրոպայի» համակրանքը, մենք բավական տեղեկություններ ենք ստանում այդ զորավարի մասին: Այստեղ, այնուամենայնիվ, երևում է Մխիթարյանների համակրական վերաբերմունքը Գիշի նկատմամբ, մինչդեռ աշխատության հեղինակը ցույց է տալիս, որ այդ համակրանքը չքանում էր, երբ «Եվրոպան» խոսում էր Լայոշ Կոշուտի մասին: Ինչ-որ չափով այստեղ դրսևորվել է Մխիթարյանների ավանդական հայրենասիրությունը:

«Եվրոպան» ընդունում է, որ Լ. Կոշուտը ոչ միայն հունգարական հեղափոխության, այլև ընդհանրապես ավստրիական բռնապետության դեմ պայքարող մյուս ազգերի ղեկավարն էր:

Մ. Մխիթարյանը վերլուծության է ենթարկում նաև Զմուռնիայում լույս տեսնող «Արշալույս Արարատյանի» հոդվածները: Նա համոզիչ փաստերով բացահայտում է, որ չափավոր այդ թերթը իր պահպանողականությունը ցուցադրել է նաև բուն խնդրո առարկա թեմային անդրադառնալիս. հենց միայն այն հանգամանքը, որ «Արշալույս Արարատյանը» քաղաքական հարցերի վերաբերյալ հիմնականում արտատպություններ էր անում այլ թերթերից, վկայում է, որ Ղուկաս Պալղազարյանի պարբերականը կարևորություն չի ընծայել եվրոպական հեղափոխական դեպքերին: Մյուս կողմից էլ, ելնելով իր զուսպ դիրքորոշումից, ինչպես ցույց է տալիս Մ. Մխիթարյանը, այդ թերթը մի որոշ դժգոհություն էր

հայտնում ավստրիական բռնակալության դեմ, այդ երկրի «ոչ այնքան մարդասիրական և սահմանադրական» կարգերի նկատմամբ:

Հունգարական բանակի պարտության ու ձախորդությունների մասին լուրերը «Արշալույս Արարատյանը» հաղորդում է անտարբերությամբ, որը նույնպես բացահայտում է նրա ոչ դրական վերաբերմունքը հունգարական ազատագրական շարժման հանդեպ: Առհասարակ, Մ. Մխիթարյանը ցույց է տալիս, որ «Արշալույս Արարատյանը» ավելի շատ հակված էր հունգարական ազատագրական շարժման դեմ խստությունների քաղաքականությանը:

Աշխատության մեջ քննարկվում են նաև Կ. Պոլսում հրատարակվող «Հայաստան» թերթում տպագրված նյութերը: Այս թերթը ևս արտահայտում էր արևմտահայ պահպանողական գործիչների մտայնությունը՝ Հովհաննես Զամոռձյանի խմբագրության տարիներին, սակայն Մ. Մխիթարյանը ցույց է տալիս նաև թերթի վերաբերմունքի փոփոխությունը առավել առաջավոր դիրքերի վրա կանգնած Մկրտիչ Աղաթոնի խմբագրման տարիներին՝ 1848-1851 թթ.: Հիրավի, այդ ժամանակ թերթը գովեստի խոսքեր է ուղղում Լ. Կոշուտի հասցեին, որը «Մաճառիստանի թագավորող նախագահին էր», լայնախոհությամբ է մոտենում խնդրո առարկա դեպքերին և առհասարակ, քաղաքական ցնցումներին:

«Ազգասեր Արարատյանը», որը խմբագրում էր Մ. Թադիադյանը (Կալկաթա, 1848-1852 թթ.) բավական նյութեր է տպագրել հունգարական հեղափոխության մասին՝ գովեստի գնահատականներ տալով երևելի գորավար Լ. Կոշուտին: Գրեթե նույն տեսակետն ուներ, ինչպես ցույց է տրվում աշխատության մեջ, Գ. Պատկանյանի «Արարատը» (1850-1851 թթ.), որը հավատում էր պարտված հունգարացիների ապագա հաջողություններին:

Մ. Մխիթարյանը այս գրքում առավել մանրամասն է ներկայացնում հունգարական հեղափոխության վերաբերյալ գնահատականները և արձագանքները հայ իրականության մեջ: Վերլուծելով XIX դ. 60-ականների Ռուսաստանի հեղափոխական իրադրությունը՝ նա գուցա հետներ է անցկացնում մյուս ժողովուրդների ազատագրական շարժումների և դրանց առնչվող պատմական դեպքերի միջև:

Մ. Մխիթարյանը քննարկում է ոուս հեղափոխական Միխայիլ Բակունինի կոչը՝ ուղղված «ռուս, լեհ և բոլոր սլավոն բարեկամներին», որը գտնվել էր հայ հեղափոխական դեմոկրատ Մ. Նալբանդյանի մոտ՝ խուզարկության ժամանակ: Այն պայքարի ծրագիր էր եվրոպական, սլավոնական ազգերի և հայերի համար: Կոչում նշված էր, որ Իտալիայի ազատագրումը մահացու հարված է Հաբսբուրգյան միապետությանը, որ կործանվելու է իտալացիների, հույների, ռումիների, հունգարացիների և բոլոր սլավոնների հավաքական ջանքերով, և որի հետևանքով խորտակվելու է նաև Թուրքիան (էջ 73): Իր ուսումնասիրության շրջանակներում էլ հեղինակը լուսաբանում է Մ. Նալբանդյանի քաղաքական առնչությունները Ջ. Գարիբալդու, Ջ. Մաձձինիի և Լ. Կոշուտի հետ: Տվյալ հատվածն ունի ոչ թե հիմնահարցը նորովի լուսաբանելու, այլ խնդրո առարկան նշված շրջանակներում ամբողջացնելու իմաստ:

Մ. Մխիթարյանը քննարկել է նաև «Մշակ», «Փորձ» և «Արձագանք» պարբերականների այն նյութերը, որոնցում նույնպես տեղ էր տրվում հունգարական 1848-1849 թթ. հեղափոխությանը: Նա առանձին ջերմությամբ է գրում Գևորգ Բարխուդարյանի՝ պետեֆիական թարգմանությունների մասին, որոնք տպագրվում էին «Փորձում» և «Արձագանքում»: Արժեքավոր են և Մ. Մխիթարյանի աշխատության այն հատվածները, որոնք վերաբերում են Ալեքսանդր Ծատուրյանի և Հովհաննես Հովհաննիսյանի այն ստեղծագործություններին, որտեղ առկա է հունգարական գրականության ազդեցությունը:

Մ. Մխիթարյանը եվրոպական, մասնավորապես հունգարական հեղափոխության վերաբերյալ հայ մամուլի և գրական նյութերի հանգամանալի վերլուծությամբ նոր կողմերով է հարստացրել հայ հասարակական մտքի բնութագիրը, մյուս կողմից, իր նպաստը բերել հայ հունգարական գրական ու պատմական կապերի ուսումնասիրության գործին: Ցանկալի կլիներ, որ հեղինակը փոքր-ինչ ավելի ընդարձակ լուսաբաներ ժամանակի հայ մամուլի նյութերը ասվածի վերաբերյալ, իսկ աշխատությունը հրատարակվեր հունգարերեն և ռուսերեն լեզուներով:

Գիրքը տպագրության է պատրաստել հեղինակի որդին՝ պատմական գիտությունների թեկնածու Վարուժան Պողոսյանը:

ԱՍՄԱՐՅԱՆ Հ. Ա.

Պատմական գիտությունների թեկնածու